

ՀՀ ԳԱԱ Սևանա լճի պահպանության փորձագիտական հանձնաժողովը և EU4Sevan ծրագրի թիմը քննարկեցին Սևանա լճի վերաբերյալ առաջնահերթությունները և համագործակցության հնարավորությունները



Քննարկմանը մասնակցեցին ՀՀ ԳԱԱ Սևանա լճի պահպանության փորձագիտական հանձնաժողովի նախագահ Բարդուխ Գաբրիելյանը, հանձնաժողովի անդամներ՝ ՀՀ ԳԱԱ բուսաբանության ինստիտուտի գեոբուսաբանության և էկոլոգիական ֆիզիոլոգիայի բաժնի վարիչ Գեորգի Ֆայվուշը, ՀՀ ԳԱԱ ինֆորմատիկայի և ավտոմատացման պրոբլեմների ինստիտուտի գիտական գծով տնօրենի տեղակալ, հաշվողական և ինացական ցանցերի բաժնի վարիչ Վլադիմիր Սահակյանը, ՀՀ ԳԱԱ երկրաբանական գիտությունների ինստիտուտի գիտաշխատող, աշխարհագրական տեղեկատվական համակարգի մասնագետ Ալեքսանդր Առաքելյանը, ինժեներ-հիդրոլոգ, տեխնիկական գիտությունների թեկնածու Ալեքսեյ Թարվերդյանը, հիդրոլոգ Օֆելյա Գրիգորյանը, EU4Sevan ծրագրի թիմի ղեկավար Քրիստիան Յենշելը, ծրագրի կոյուղաջրերի կառավարման գծով խորհրդական Նվեր Խաչատուրյանը, ՄԱԶԾ բաղադրիչի (էկոհամակարգային կառավարում) համակարգող Աստղիկ Դանիելյանը:

Սևանա լճի շրջակա միջավայրի պահպանության

ուղղված EU4Sevan ծրագիրն իրականացվում է Գերմանիայի միջազգային համագործակցության ընկերության (GIZ) և ՄԱԿ-ի զարգացման ծրագրի կողմից Եվրոպական միության ֆինանսավորմամբ:

EU4Sevan ծրագրի թիմի ղեկավար Քրիստիան Յենշելը ասաց, որ հիմնական նպատակն է ունենալ ընդհանուր տեսլական և համատեղ լուծել Սևանա լճի հետ կապված բարդ և բազմաբաղադրիչ խնդիրները: «Մեզ համար շատ կարևոր է գիտահետազոտական բաղադրիչը: Որոշում կայացնող անձինք պետք է կայացնեն գիտահեն, փաստահեն որոշումներ: Մենք այստեղ փնտրում ենք համագործակցության եզրեր: Առաջին քայլն արված է, մեր ծրագրում ներգրավված է հանձնաժողովի անդամ Ալեքսանդր Առաքելյանը՝ որպես ջրային ռեսուրսների համապարփակ կառավարման գծով խորհրդական», - ասաց Քրիստիան Յենշելը:

ՄԱԶԾ բաղադրիչի համակարգող Աստղիկ Դանիելյանը ասաց. «Ծրագրի շրջանակներում իրականացվող գործողությունները սերտորեն համակարգվում են Հայաստանի կառավարության հետ, և որոշումները կայացվելու են կառավարության կողմից, ունենալու են իրավական ուժ: Սևանա լճի հետ կապված գործողությունները համակարգվելու և թխելու են այդ որոշումներից»:

ՀՀ ԳԱԱ Սևանա լճի պահպանության փորձագիտական հանձնաժողովի նախագահ Բարդուխ Գաբրիելյանը նշեց. «Ամենակարևորը ջրի որակն է, իսկ այն հնարավոր է բարելավել լճի մակարդակի բարձրացմամբ: Մենք պետք է մտածենք ջրի ավելի արդյունավետ օգտագործման ուղղությամբ: Կլիմայի փոփոխության ներկայիս պայմաններում պետք է նվազեցնել ջրի ելքը լճից, իսկ դրա համար պետք է նվազեցնել ջրի կորուստները, ո-

րոնք որոշ տեղերում հասնում են 80 տոկոսի»:

ՀՀ ԳԱԱ ինֆորմատիկայի և ավտոմատացման պրոբլեմների ինստիտուտի գիտական գծով տնօրենի տեղակալ Վլադիմիր Սահակյանը առաջարկեց ծրագրում ներառել տվյալների հավաքագրման բաղադրիչը: «Ամենաբարդը տեղեկատվության հավաքագրումն է: Տարիներ առաջ մենք փորձեցինք ստեղծել տվյալների բազա՝ հավաքագրելով տվյալներ Սևանա լճի հետ կապված գործունեություն իրականացնող կազմակերպություններից: Մեր համակարգն աշխատեց կես տարի, որից հետո կազմակերպություններն այլևս տեղեկատվություն չտրամադրեցին: Տեղեկատվության հավաքագրումը շատ կարևոր է, դրա համար պետք է լինեն պայմանագրեր այդ բոլոր կազմակերպությունների հետ», - ասաց նա:

Տեխնիկական գիտությունների թեկնածու Ալեքսեյ Թարվերդյանը բարձրացրեց Սևանա լճի ավազանում կոյուղաջրերի մաքրման հարցը. «Շրջակա միջավայրի նախարարության կողմից մշակվում է նախագիծ, որով նախատեսվում է գոյություն ունեցող մտորման կայանների փոխարեն տեղադրել լոկալ մաքրման կայաններ: Ծրագրի շրջանակներում պետք է գնահատել՝ տեղադրել՝ այդ լոկալ կայանները, թե՞ ոչ, ի՞նչ անել գոյություն ունեցող հզոր կայանների հետ»:

ՀՀ ԳԱԱ Սևանա լճի պահպանության փորձագիտական հանձնաժողովի և EU4Sevan ծրագրի թիմի կողմից ձեռք բերվեց պայմանավորվածություն՝ ամրապնդել և զարգացնել համագործակցությունը:

ՀՀ ԳԱԱ գիտության հանրայնացման և հասարակայնության հետ կապերի բաժին